

ԴԻԱԿԻԶՈՒՄ, ԹԵՇԱՂՈՒՄ

ԴԻԱԿԻԶՈՒՄ ՈՐՊԵՍ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՊԱՏՃԱՌ

Տարոն սարկավագ Առաքելյան

ՀՀ-ում գործող Ազգային ժողովն՝ ըստ ՀՀ սահմանադրության 62-րդ հոդվածի, մեր երկրի օրենսդիր մարմինն է: Այն մշակում և կառավարության քննարկմանն է ներկայացնում օրենքների նախագծեր, որոնք ընդունվելուց հետո օրենքի ուժ են ստանում և գործողության մեջ մտնում նախատեսված ժամկետում: Անհամաձայնություններ լինելու դեպքում հրավիրվում է ԱԺ արտահերթ նիստ, և եթե քվեարկության արդյունքում օրենքը չի ընդունվում, կառավարությունը ետ է վերցնում և այն դադարում է օրենքի ուժ ունենալուց: 2007-ի փետրվարի 27-ին, երկրորդ ընթերցմամբ, ընդունվեց «Հուղարկավորությունների կազմակերպման և գերեզմանատների դիակիզարանների շահագործման մասին» օրենքը:

Օրենքի նախագծի հեղինակը դիակիզման անհրաժեշտությունը պայմանավորում է տարածքային խնդրով՝ «Երևանը շրջապատված է գերեզմանոցներով, որոնք զբաղեցնում են մայրաքաղաքի տարածքի 7-8%»¹, այսինքն՝ Հայաստանում տարածքները չեն բավարարում գերեզմանների համար: Մի փոքր մոնիթորինգ անցկացրեցինք սույն խնդրի առավել բարդ վիճակում գտնվող տարածքում՝ Երևանում, արդյունքում ունենալով հետևյալ պատկերը: Պարզվեց, որ Երևանի գերեզմանատների զբաղեցրած տարածքների Ճիշտ չորս անգամ ավելին՝ շինարարության համար ոչ պիտանի տարածք է, որից, եթե ուղիղ կեսը հատկացվի նոր գերեզմանատների կառուցմանը, ապա կնշանակի, որ առնվազն հինգ հարյուր տարի Հայաստանը չի ունենա գերեզմանների հետ կապված որևէ խնդիր, մանավանդ, եթե այդ նորակառույց գերեզմանատներն ունենան կարգավորված գծագիր, հավասարապես բաշխված գերեզմաններով, ինչը հատուկ է քաղաքակիրթ երկրներին, ոչ թե ինչպես մեր այսօրվա

¹ www.mediaforum.am

գերեզմանատներն են (մեկի գերեզմանն իր մեծությամբ խաղահրապարակ է, իսկ մյուսինը՝ կաշառքի քչության պատճառով չի անցնում 2.5 քմ-ը):

Երևան քաղաքի ընդ. մակերեսը	22.453 հա
Քաղաքաշինական նպատակով օգտագործված է	14.505 հա
Գերեզմանատներ համար հատկացված	1.221 հա
Շինարարության համար ոչ պիտանի տարածք է	5.796 հա

ՀՀ «ՀուղարկաՎորությունների կազմակերպման և գերեզմանատների դիակիզարանների շահագործման մասին» օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ կետով.
«Գերեզմանատների կազմակերպում չի թույլատրվում հետեւյալ տարածքներում.

ա) ջրամատակարարման աղբյուրների եւ հանքային ջրերի սանհտարական պահպանման առաջին եւ երկրորդ գոտիներում, առողջարանների սանհտարական պահպանման առաջին գոտում. բ) լճերի, գետերի եւ մյուս բաց ջրամբարների ափերին.
 զ) ջրածածկվող, սողանքների եւ փլուզումների ենթակա եւ ճահճային գոտիներում. դ) այն վայրերում, որտեղ ստորերկրյա ջրերի խորությունն առավելագույն հոսքի ժամանակ հողի մակերեսից չորս մետրից պակաս է. ե) անտառային ֆոնդի հողերում, հասուկ պահպանվող տարածքներում, բնակավայրերում՝ ընդհանուր օգտագործման ենթակա գրոսայգիներում, պուրակներում, այգիներում եւ այլ կանաչ տարածքներում», պետք է նկատի առնել, որ նշված տարածքներից 1/3-ը պատկանում է շինարարության համար ոչ պիտանի 5.796 հա-ին: Ըստ օրենքի հեղինակ Տիար Վլադիմիր Բաղայանի հայտարարության՝ պուրակներում կ հարցի ճգնաժամային վիճակը. «Այսօր Երևան

քաղաքի 10%-ը գերեզմանոցներ են»², որն անշուշտ չի համապատասխանում իրականությանը, այն ուռչացված է ավելի քան երկու անգամ: Այսօրվան ևս մոտ հինգ հարյուր տարի պետք է գումարել, և միայն այդ ժամանակ հնարավոր է Երևանում ստանալ այդ պատկերը:

Իսկ ի՞նչ են մտածում քրեական ոլորտի օրենսգետներն առաջ քաշված հարցի առնչությամբ: Քանի որ նույն օրենքի 10-րդ հոդվածի 7-րդ կետն ասում է. «**ինքնասպանության, անհայտ պատճառից հանկարծամահության, մարմնական վնասվածքների հետեւանքով տեղի ունեցած մահվան եւ մահը հանցագործության հետեւանքով տեղի ունենալու կասկածի դեպքերում մահացածի մարմնի (աճյունի) հուղարկավորումը չի թույլատրվում առանց դատարժշկական մարմինների թույլտվության»: Նախ, եթե դիակն արդեն աճյունի է վերածվել (այրվել է դիակիզարանում), ապա դատարժշկական փորձաքննությունն այստեղ այլև ոչինչ քննել չի կարող, հետևաբար ուղղակի ավելորդ էր նախորդ օրենքը մեխանիկորեն արտագրել և կողքին ավելացնել «աճյուն» բառը: Եվ գաղտնիք չէ, նման փորձաքննությունները երբեմն ոչ ճշգրիտ տվյալներ են արձանագրում, և հետագայում անհրաժեշտ է լինում արտաշիրմում և դատարժշկական փորձաքննություն կատարել, ինչն անհնար է դիակիզման դեպքում:**

Այսպիսով, սույն օրենքն ընդունելու անհրաժեշտություն, ինչպես ներկայացվում է հեղինակի կողմից, իբրև տնտեսական հարցի լուծում՝ ավելորդ է, քանի որ այդպիսի հարց առաջիկա հինգ հարյուր տարիների ընթացքում մեզանում չի լինի: Եվ վերջապես սույն օրենքը, ինչպես արդեն նկատելի դարձավ, պետք է խոչընդոտի շատ հանցագործությունների (**ինքնասպանություն և դիտավորյալ սպանություն**) բացահայտմանը, ինչը մեկ այլ օրենքով (ՀՀ քրեական օրենք) պատժելի արարք է:

ԹԱՂՄԱՆ ԱՎԱՆԴԱԿԱՆ ՏԱՐԲԵՐԱԿԻՑ ԶԱՏ ԱՅԼ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐ

Ցանկացած բնագավառում, երբ նախկինում ընդունված օրենքը կամ սովորույթը կորցնում է իր ուժը, փնտրում են նոր տարբերակներ: Այժմ մեր առջև ծառացել է մի խնդիր, որն անշուշտ պահանջում է նոր լուծում: Հայաստանը վաղուց տարածքային

² www.armenianow.com

խնդիրներ ունի, այդ պատճառով շատերը, այդ թվում բազմաթիվ պետական այրեր, գտնում են, որ հայերիս ավանդական թաղման կարգն այլևս անթույլատրելի է:

Հետևաբար, ներկայացվելիք տարբերակները բնավ էլ նորություն չեն մարդկության պատմության մեջ, այլ ժամանակին եղած և հիմա որոշ երկրներում կիրառվող մեթոդներից են: Մեր նախնիները եղել են բարեպաշտ քրիստոնյաներ, բնական է, որ նրանց ավանդած ձևը հաստատված է եղել Եկեղեցու կողմից՝ Եկեղեցական կարգի ու կանոնի համաձայն, իովելոր երգերի խաղաղեցնող ու ցավ ամոքող ձայների ներքո, հավուր պատշաճի ծիսակատարությամբ, և ամենակարևորը՝ մեծ հարգանք ցուցաբերելով հանգուցյալի նկատմամբ: Արարողության վերջում, հարազատները լսում էին իովելորականի հուսադրող ու մխիթարող խոսքերը: Դիակի նկատմամբ մեր նախնիներն այնպիսի մեծ հարգանք են ցուցաբերել, որ նույնիսկ, ըստ Մաշտոցյան ծիսակարգի՝ դիակը դրվում էր Եկեղեցու ներսում և ամբողջ գիշեր հսկվում: Ոմանք ասում են, քանի որ Եկեղեցու կարգը չենք կատարում, ուրեմն արդեն հեռացել ենք վերը նշված հավուր պատշաճից: Մաշտոցյան ծիսակարգի համաձայն՝ եթե ինչ-ինչ պատճառներով հանգուցյալը Եկեղեցի չէր տարվում, ապա Եկեղեցական կարգը կատարվում էր տանը: Այստեղից հետևություն, որ դեռևս IX դ. արդեն լինում էին դեպքեր, որ դիակը չէր տարվում Եկեղեցի: Եվ հատկանշական է՝ նմանատիպ դեպքեր քիչ չեն եղել, քանի որ դրա մասին հատուկ հղում կա ծիսական գրքում:³: Հայտնի է, որ դեռևս Ն.Զ.-ը հայկական լեռնաշխարհում ընդունված է եղել հանգուցյալին թաղելը. դին ամփոփել են հողում կամ դրել դամբարանի մեջ: Եղել են այսպես կոչված ընդհանրական դամբարաններ, որտեղ դրվել են մոտ 3-35 դի⁴: Այստեղ չէր կարող դրվել մեծատոհմիկի աճյունը, որի համար պատրաստված էր հատուկ մեծ ու ճոխ դամբարան: Մեծատոհմիկներից զատ, նման պատվի կարող էին արժանանալ շամաններն ու քրմերը: Դիակները թաղվել են՝ կքանստած ու թևերը կծկած, կողքի պառկեցրած ու ծեռքը գլխի տակ, կավաճան կամ գետնաքար դրած: Հանդիպել է նաև գլուխն ու մարմինն առանձին-առանձին խսիրի մեջ փաթաթած և նայած, թե այդ ժամանակ ժողովուրդն ինչ հավատալիքներ է ունեցել հետմահու կյանքի վերաբերյալ: Նման գերեզմաններ հայտնաբերվել են Լճաշենում, Աստղաձորում, Կարձաղբյուրում և այլուր:

³ Մաշտոց, Ս. Էջմիածին 2001, էջ 443

⁴ ՀՍՀ հանրագիտարան, հան 4, Երևան 1978թ, էջ 132

Եղել է նաև դիակիզում՝ կապված գրադաշտական և հեթանոսական կրոնների հետ, որը կատարվել է հատուկ ծեսով: Իսկ քրիստոնեություն ընդունելուց հետո, հայ իրականության մեջ իսպառ վերացել են թաղելուց բացի բոլոր ձևերը: Եզնիկ Կողբացին, խոսելով հեթանոսության մեջ պաշտպող քարից ու փայտից կերտված արձանների մասին, նշում է, որ մեղք է համարվում արհեստավորի քանդակը, եթե այն կանգնեցվել է պաշտամունքի առարկա դարձնելու նպատակով: Իսկ եթե արձանը կանգնեցված է գերեզմանի վրա՝ ի հիշատակ ննջեցյալ բարեկամի, ապա դա բնավ էլ մեղք չէ: Ընդհակառակը՝ ցանկալի, նույնիսկ գովելի վարմունք է:⁵ Սա արդեն խոսում է ոչ միայն շիրմաքարերի հնության, այլ հանգուցյալին պատվելու մեր վաղեմի սովորույթի մասին: Այսպիսով, պարզ է, թե ինչ ենք հասկանում ավանդական կարգ ասելով:

ԱՅԼ ՏԱՐԹԵՐԱԿՆԵՐ

Վերլուծենք մի այնպիսի իրողություն, ինչպիսին մարդակերությունն է: Այն կարող էր սնվելու ձև լինել, բայց մարդակերն ուներ իր ուրույն մեկնաբանությունը: Երբ կերել են թշնամուն, դա խորհրդանշել է կատարյալ հաղթանակ, քանի որ թշնամուն ուտելով, ինքնաբերաբար ոսխին պարփակել են սեփական մարմնում ու դատապարտել հավերժական գերության: Երկրորդ՝ հաղթանակը լիակատար չէր լինի, եթե թշնամու աչքերով չնայեին աշխարհին: Հենց սրանով է բացատրվում այն երևույթը, որ պարտվող ցեղի առաջնորդի աչքերը պատկանում էին առաջին հաղթողին և մատուցվում հատուկ ծեսով: Իսկ երբ կերել են մտերիմին, մեծ հարգանք են մատուցել նրան՝ չթողնելով, որ հոգին պատահաբար կլանվի ինչ-որ պիղծ կենդանու կողմից ու անարգվի կամ ուղղակի հեռանա իր հարազատներից:⁶



Մենք չունենք այս անհեթեթ գաղափարները: Ծննդոց գրքում նկարագրվում է, թե ինչպես Աստված ստեղծեց մարդուն և ինչ հրամաններ տվեց՝ կապված մարդու ապրելակերպի հետ. «Ահա ձեզ տվեցի ողջ երկրի վրա

⁵ Եզնիկ Կողբացի, Եղծ Աղանդոց, Երևան 1994թ, էջ 73

⁶ Բանավոր ավանդագրույց

տարածված սերմանելի բոլոր բույսերի սերմերը և իրենց մեջ պտուղ սերմանելու սերմ պարունակող բոլոր ծառերը: Դրանք թող ձեզ համար սնունդ լինեն,....»⁷: Այստեղից տեղեկանում ենք, որ նախամարդը պետք է օգտվեր Աստծո ստեղծած բնության բարիքներից ու պիտի կշտանար պտուղներով, ոչ թե դիակներով: Իսկ Մովսեսի օրոք Աստված հստակ հայտնում է, թե ո՞ր կենդանին է ուտելի ու մաքուր, և որը՝ պիղծ ու անպետք:⁸ Եթե խոզը, կճղակավոր է, բայց չի որոճում, պիղծ է համարվում ուտելու համար, ապա որքան մեծ պղծություն է մարդակերությունը: Բայց ահա գալիս է մի պահ, երբ հրեա ժողովուրդը ստիպված է լինում առավոտից մինչ երեկո պատերազմել թշնամու դեմ: Եվ քանի որ պատերազմի դաշտում մարդավայել սնվելու հնարավորություն չկար, մարտիկները խմում էին իրենց թշնամու արյունը, որը ծառայուն էր թե' որպես ջուր և թե' որպես վիտամիններով հարուստ սնունդ: Այս արարքի համար խրայելացիներն ու դրսից եկած, նրանց մեջ բնակվող մարդիկ լսում են Աստծո սպառնալից պատվիրանը. «...Ես իմ զայրացած հայացքը կուղղեմ արյուն ուտող այդ մարդու վրա և նրան կվերացնեմ իր ժողովրդի միջից»:⁹ Եվ եթե նույնիսկ Աստված պատվիրած էլ չիներ, ինչպես կարելի է ուտել Աստծո պատկերով ստեղծված էակին, որն Աստծո արարչագործության թագն ու պսակն է: Բնության մեջ ամեն ինչ՝ շնչավոր, թե անշունչ, ունի իր առաքելությունը, և մարդը կեր չպետք է դառնա՝ որպես սնունդ, թե տնտեսական կարևոր հարցի լուծման ձև: Այսպիսով, դիակը վերացնելու համար ուտել չի կարելի:

Ոմանք կառաջարկեն կենդանիներին կերակրել դիակով, որը միաժամանակ կլուծի երկու հարց. այն գումարները, որոնք ծախսվում են կենդանաբանական այգու կենդանիներին սնելու համար, զգալիորեն կնվազեն, իսկ դիակն էլ վերածվելով կերի, չի թաղվի, հետևաբար տարածք չի զբաղեցնի: Այս երկակի շահավետ միջոցը կիրառվել է մարդու կողմից դեռևս նեղիթյան շրջանում:¹⁰ Այն հանդիմանվել է Աստվածաշնչում, թեև ուղղակի հղում չկա, բայց բազմիցս կարդում ենք.«...[այսինչ] տնից ով քաղաքում մեռնի, շները պիտի ուտեն նրան, իսկ ով դաշտում մեռնի, երկնքի թռչունները պիտի կտցեն»:¹¹ Իսկ երբ մարգարեների որդիներից մեկի ընկերո չհարվածեց ընկերոջը, վերջինս

⁷ Ծննդոց 1:29

⁸ Ղետական 11:1-47, Բ Օրինաց 14:3-21

⁹ Ղետական 17:10

¹⁰ ՀԱՀ հանրագիտարան, հտ 4, Երևան 1978, էջ 131

¹¹ Գ Թագավորաց 14:11

մարգարեացավ. «Քանի որ Տիրոջ ձայնին չհնազադնվեցիր, իենց որ ինձանից հեռանաս, մի առյօւծ քեզ կրգկտի»¹²: Առյօւծը նրան բզկտեց որպես պատիճ՝ Տիրոջ խոսքին չանսալու համար, իսկ Հեղաբել թագուհու մասին Եղիան մարգարեացավ «Ճները պիտի ուտեն նրան Հեղայելի պարսպի մոտ»:¹³ Սրան հետևում է Աքաաբ թագավորի մասին մարգարեությունը. «Աքաաբ թագավորի մարդկանցից քաղաքում մեռածներին շներն են ուտելու, իսկ դաշտում մեռածների դիակները երկնքի թռչուններն են կտցելու»¹⁴ :Հար և նման մարգարեություններ արդեն եղել էին Հերոբովամ և Բաաս թագավորների վերաբերյալ: Փաստորեն, առյօւծը մարգարեի ընկերոջը բզկտելով սպանեց, իսկ մյուս մեղավորները, որոնք արժանացան կեր դաշնալու «Ճակատագրին», ոչ թե կենդանիներից սպանվեցին, այլ տարբեր տեղերում մեռնելով, կերակրեցին շներին և թռչուններին: Եթե չենք ցանկանում անարգել մեր հանգուցյալներին, և մանավանդ մեղանչել Տիրոջ առաջ, պետք է այս մտքից հրաժարվել: Թեպետև այն, ինչպես արդեն նշել ենք, բերում էր երկակի շահ: Իսկ այն մարդիկ ովքեր չեն հավատում Աստվածաշնչի Ճշմարտությանը, բնականաբար, նրանց չի հուզում վերը նշված հանդիմանությունները, սակայն մի պահ պետք է պատկերացնել այն երեխայի հոգեկան ապրումները, երբ պատահաբար իմացել է, թե կենդանաբանական այգում կամ կրկեսում իրեն զվարճացնող առյօւծը կերել է իր մահացած հարազատին, որ ավելի վատ է, վաղն էլ իրեն է ուտելու: Այսպիսով, մարդկանց կեր դարձնել չի կարելի: Շատ հնուց և մինչև այժմ էլ կիրառվում է մարմինը ջրին հանձնելու տարբերակը: Այն հատկապես կիրառվել է նավաստիների կողմից: Այս մեթոդը նույնպես քրիստոնեական չէ, բայց քանի որ հայերը ծով չունեն, և մտավախություն էլ չկա, որ մի օր կորոշի այդ անհեթեթությունը կօրինականացվիլ: Բացի ավանդական կարգից, կան տարբերակներ, որոնք թեև շահավետ են, բայց ընդունելի չեն: Քանզի հոգեբանական, բարոյական և քրիստոնեության տեսանկյունից անթույլատրելի են: Դրանք չեն կարող տեղ գտնել հայ իրականության մեջ՝ անկախ նրանից, թե վաղը ինչ տնտեսական հարցեր կծագեն:

ԴԻԱԿԻԶՈՒՄԸ ՈՐՊԵՍ ԱՅԼ ՏԱՐԲԵՐԱԿ

¹² Գ Թագավորաց 20:36

¹³ Գ Թագավորաց 21:23

¹⁴ Գ Թագավորաց 21:24

Արդ մի տարբերակ կա, որի կիրարկման համար հատկապես շահագրգռված են պետական այլերից շատերը. այս տարբերակի անունն է՝ **ՂԻԱԿԻԶՈՒՄ**:



«Ղիակիզում»-ը բարդ բար է, այն բաղկացած է ոչ և կիզեկի արմատներից և նշանակում է հանգուցյալին **կրակով վարել**: Ղիակիզումը՝ հանգուցյալին կրակով վարելը, չնայած խոստանում է տնտեսական մեծ օգուտ, մասնավորապես տարածքային առումով, բայց այն անթույլատրելի է, ինչպես վերը նշված այլ տարբերակները: Մեր ժամանակներում, երբ այսքան շիկացած է կրոնական մթնոլորտը, և բազմաթիվ «լույս սփռող» կրոնական կազմակերպություններն իրենց խառնիձաղանջ ու մոլորեցնող վարդապետություններով խոշտանգում են հազարավոր հայորդիների հոգիներ, խեղաթյուրում հայի ազգային նկարագիրը, նման վարվելակերպի թույլատրելիությունն ամենաքիչը անպատճի է: Երբ միջազգային քաղաքական խոշոր կազմակերպությունները, հովհանավորի դիմակի ներքո ծպտված, ջանք չեն խնայում փոքր ազգերին ծովելու՝ չի բացառվում, որ դիակիզմանը դրական պատասխան տալը հայ ժողովրդի համար դաշնա ճակատագրական: Գաղտնիք չէ, որ Հայ Եկեղեցին մեծ դեր ունի ազգապահպանության գործում: Ղիակիզման ընդունումը ժողովրդին աստիճանաբար կիեռացնի Եկեղեցուց, ինչը պակաս հաճելի չէ մեծ տերություններին: Ղիակիզումն առաջին հերթին մեծ մեղք է, երկրորդ՝ մեր ազգային մտածողությանը խորը մի երևույթ, և վերջապես, անհարգալից ու անմարդկային վարվելակերպ:

1918թ. դեկտեմբերի 7-ին ՌՍՖՍՀ ժողովումսով վետի դեկրետի համաձայն՝ ՍՍՀՄ-ում օրինական է համարվել դիակիզումը:¹⁵ Վերջինս նույնիսկ այդ դժնիակ տարիներին չի թափանցել հայ իրականություն, և հարկ չկա այսօր, երբ հայ ժողովուրդն ազատվել է օտարի լծից ու չունի կրոնական ճնշումներ, նման գազանաբարո արարքը թույլատրվի: Երևոյթը ո՞չ հայկական է, ո՞չ էլ մարդկային: Եթե ոմանք համաձայն են այրել իրենց ծնողների դիակները, ապա ո՞վ պետք է հոգա նրանց այն դրացիների հոգեկան վիճակի մասին, որոնք կամա թե ակամա ականատես կլինեն դիակիզում կոչված վայրագությանը: Հսկայական ֆինանսներ պետք է ծախսվեն՝ հոգեբաններ վարձելու համար, որոնք պիտի փորձեն ամոքել այն երեխաների հոգեկան ծանր ապրումները,

¹⁵ ՀՍՀ հանրագիտարան, հա 4, Երևան 1978, էջ 132

որոնք չեն կցանկանա շնչել իրենց ծնողների այրվող մարմինների ժահահոտը, ո՞չ էլ տեսնել մոխրացած աճյունները: Եթե մի օր դա դառնա սովորական երևոյթ, ապա շատ ցավալի է, քանի որ մի մեծ քայլ արած կլինենք դեպի հեթանոսություն, դեպի վայրենություն:

Դիակիզումն ընդունված է բուդայականության և հինդուիզմի մեջ¹⁶և բոլորովին էլ քրիստոնեական չէ: Չնայած քրիստոնեական որոշ ուղղություններ կան, որոնք գտնում են, թե դիակիզումը թույլատրելի է: Սրանք, անշուշտ, սխալվում են. Վերջիններս երկի անձանոթ են Աստվածաշնչին, որ չգիտեն, թե Ամոս մարգարեն 2:1-ում, փոխանցելով Տիրոջ խոսքն, ասում է. «...Ես պիտի պատժեմ նրանց, քանի որ նրանք այրեցին եղոնացիների թագավորների ոսկորները»: Ոսկորներն այրելը պղծություն է, այն աստիճան, որ նույնիսկ որոշ իրեական արքաներ կրոնական բարեփոխումներ էին կատարում, Բահայի զոհասեղանները պղծելու նպատակով գերեզմաններից ոսկորներ էին դուրս բերում ու դրանք այրում վերը նշված բագինների վրա:

Իհարկե, չեն սխալվում նրանք, ովքեր ասում են, թե հոգին է կարևոր, իսկ մարմինը հագուստի նման մաշվելու է, միայն պետք է նրա համար, որպեսզի մարդ կարողանա հոգալ իր հոգենը պետքերը: Բայց մի՞թե սա իրավունք է տալիս այրել Սուրբ Հոգու տաճարը, որը քրիստոնյայի մարմինն է: Ինչպես երանելի Պողոս առաքյալն է ասում. «Զգիտե՞ք, թե ձեր մարմինները տաճար են Սուրբ Հոգու, որ ձեր մեջ է, և որն ստացել եք Աստծուց, և դուք ձեր տերը չեք»:¹⁷ Եթե կարելի է այրել քրիստոնյայի մարմինը՝ պատճառաբանելով, թե մարմինն այլևս կատարել է իր առաքելությունը, ապա կարելի է նաև մի վայրից տեղափոխվելուց առաջ այրել տեղի եկեղեցին և հեռանալ: Իսկ թե ինչո՞ւ է հարկավոր այրել խոնարհված եկեղեցին, անշուշտ, կտան որոշ անհեթեթ պատասխաններ, կփորձեն նույնիսկ իիմնավորել Աստվածաշնչով: Առհասարակ Աստվածաշնչին և հատկապես Նոր Կտակարանին խորթ է դիակի հետ նման վարվելակերպը: Նույնիսկ մեր տեր Հիսուս Քրիստոս մի առիթով ասաց. «Թու'յի տվեք նրան, որպեսզի իմ թաղման օրվա համար այդ պահի»:¹⁸ Վերջապես հիշենք Աստծո այն խոսքը, որ ասում է. «...որովհետև հող էիր և հող էլ կդառնաս»:¹⁹ Բայց ոմանք կասեն, թե

¹⁶ՀԱՀ հանրագիտարան, հոդ 4, Երևան 1978, էջ 132

¹⁷Ա Կորնթ. 6:19

¹⁸Հովհ. 12:7

¹⁹Ծննդ. 3:19

մոխի՞րն էլ հող է, բացի այդ՝ Աստծո այդ խոսքը նշանակում է, որ անկենդանությունից վերցվեցիր ու կենդանացար՝ նորից պիտի անկենդանանաս: Միևնույն է՝ մարմինն այրելը մեղք է: Հասկանալու համար, նախ ասենք, թե մարմնի, մտքի և հոգու այն բոլոր արարքները, որոնք բաժանում են մարդուն Աստծուց՝ խախտելով աստվածադիր բնական օրենքները, մեղք են: Եթե մարմինը մոխրանում է մոտ 2.5 ժամում²⁰, մարդու ձեռքով շիկացված օդում, կարծում ենք, թե դա աստվածադիր օրենք լինել չի կարող: S. Բարկեն ավագ քահանա Մազսուտյանը շատ ճիշտ է նկատել, որ ոչ ոք իրավունք չունի Սուրբ Հոգու տաճարը մոխրի վերածելու: Թող ինքնին փլվի այդ Ս. տաճարը, եթե Աստված կամենում է²¹, բայց ոչ ոք չպետք է ցանկանա աստվածադիր օրենքն իրագործելու ընթացքը ոչ արագացնել, ոչ դանդաղեցնել: Եթե քրիստոնեական միտքը մի կողմ դնենք, միայն անմիտ և ապերախտ մարդն է իր հարազատ տնից դուրս գալուց հետո՝ այրում: Վերը նշված անմիտը մեզ չի զարմացնի, եթե ի ցույց շրջապատին, մի քիչ իր տան մոխրից վերցնի ու, սափորի մեջ լցնելով, մեծ հարգանքով պահի: Սակայն կլինեն մարդիք, որ մատնացույց կանեն մեր երանելի Ս. առաքյալներին ու խոստովանողներին, որոնց վիճակվեց վասն հավատի այրվելով նահատակվել: Ի գիտություն բոլոր նրանց, ովքեր նման մանր ու թույլ հիմքերով ցանկանում են մեծ ու լուրջ որոշումներ կայացնել. սրբերն այրվեցին կենդանի և ոչ թե մահանալուց հետո: Իսկ ոճիրը կատարեցին ոչ թե իրենց քրիստոնյա հարազատները, այլ հեթանոսները՝ կատարելով մոլագար Ներոնի, Կալիգուլայի ու Դրանց նմանների հրամանները: Հետևելով վերը նշված քահանա Մազսուտյանի խորհրդին՝ հարկ է կարդալ Եզեկիելի տեսիլը հարության մասին, որտեղ նկարագրվում է, թե ինչպես են ուսկորներն իրար միանում, մսոտվում և կենդանանում²²:

Դիակիզումը խրախուսողները նմանվում են Եզմիկ Կողբացու ասած այն պիղծ մտքով աղոթողներին, որոնց համար ավելի լավ կլիներ, եթե մաքուր մտքով քնեին: Պատմության մեջ հաճախ կրկնվում են նմանատիպ դեպքեր: Երբ մարդիկ նեղ վիճակում են, սկսում են վնասել իրենք իրենց՝ քանդելով ու ապականելով արյուն-քրտինքով շահած նվիրական և սուրբ հարստությունները: Հիմա, երբ տարածքային խնդիրներ կան, փոխանակ գտնելու քաղաքական կամ տնտեսական ձանապարհներով լուծման

²⁰ՀՍՀ հանրագիտարան, հտ 3, Երևան 1978, էջ 373

²¹S. Բարկեն ավագ քին. Մազսուտյան, Ճանապարհ առ Քրիստոս, Նյու Յորք, 1995, էջ 353

²²Եզեկիել 37:1-14

Ճիշտ տարբերակներ՝ փորձում են մեր Ս. Եկեղեցու Ս. Վարդապետությունը հարմարեցնել ըստ ցանկության: Կարծում եմ, հասկանալի է, որ բացի ավանդական կարգից, այլ տարբերակ չկա: Մարդը, մանավանդ հայ քրիստոնյան, մեռնելուց հետո միայն պիտի թաղվի:

ՂԻԱԿԻԶՈՒՄԸ ԿԱԹՈԼԻԿ ԵԿԵՂԵՑՈՒՄ

<<...Չատ անգամ չար ոգին կրակի և
ջրի մեջ էր նետում նրան, որ կործանի...>> (Մրկ. 2:21)

Սկսած Վատիկանի II ժողովից՝ (1963թ.) Հռոմի Կաթոլիկ Եկեղեցին, որոշակի հանգամանքներից ելնելով, թույլատրում է դիակիզումը: Կանոն 1176, պարագրաֆ 3-ում գրված է. «Եկեղեցին հորդորում է, որպեսզի մարդկանց մարմինները, մահանալուց հետո հողին հանձնվեն: Սակայն, միևնույն ժամանակ արտոնում է դիակիզում անել, եթե այն Եկեղեցու վարդապետության դեմ ուղղված որևէ պատճառով չի արվում»²³: Դարերի ընթացքում դիակիզման հարցը մեծ վիճաբանությունների առիթ է հանդիսացել: Դեռ I, II և III դդ. հեթանոսները, քրիստոնեության դեմ պայքարելու համար, մարդկանց մարմիններն անդամահատում էին ու այրում և դժվար թե իրենց հարգանքն արտահայտում հանգույցալի հանդեպ: Սա անում էին որպեսզի ցույց տան, թե քրիստոնյաները սխալ են, երբ ասում են՝ հոգին և մարմինը վերամիավորվելու են ու հարություն առնելու: Սրան դեմ կանգնելու համար, Հռոմի Կաթոլիկ Եկեղեցին սկզբում դատապարտեց դիակիզումը՝ հիմնավորելով. <<Որովհետև մարմինը տաճար է Սուրբ Հոգու>>, ուստի նրա հետ պետք է հարգանքով վերաբերվել անգամ մահանալուց հետո: Մանավանդ որ մարդիկ գիտեին՝ Հին Կտակարանում պարզորոշ կերպով նշվում է, որ և՝ Աբրահամը, և՝ Իսահակը, և՝ Հակոբն ու մյուս բոլորը թաղվել են²⁴: Դարեր շարունակ դիակիզման արգելքը մնում էր անխախտ: Մարդկանց մարմիններն այրել թույլ տրվեց միայն այն ժամանակ, երբ ամբողջ Եվրոպայով ժանտախտ էր տարածված, և դիակներն այրելը միակ միջոցն էր: Սակայն Վատիկանի ժողովում, ինչպես արդեն հայտնի է, կանոնը փոխվեց: Ժողովում մեծամասնությունը որոշեց արտոնել դիակիզումը և Եկավ

²³ Code De Droit canonique. A. Boutemps (France). 1972. P. 205

²⁴ Ծննդ. 25:8-10, 35:29, 49:33

այն եգրակացության, որ այն ավելի խնայողական է, քան դիակի հողին հանձնումը, որ մոլսրով լի սափորն ավելի քիչ տեղ է զբաղեցնում, քան մեծ դագաղը, որ այն բոլորովին էլ հակաքրիստոնեական երևոյթ չէ և ոչ մի կերպ չի խանգարում մարմնի և հոգու վերամիավորմանը։ Ըստ նրանց՝ հողի տակ նույն այրման գործընթացն է տեղի ունենում, միայն ավելի դանդաղ։ Դիակիզումն այդ ընթացքն արագացնում է և մոտ երեք ժամում այրում այն, ինչ հողն այրում է տասնյակ տարիների ընթացքում։ Միայն թե հողում ոսկորները պահպանվում են։

Հռոմի Կաթոլիկ Եկեղեցին հավաստում է, որ հավատացյալներն իրենք են դիմել, որպեսզի դիակիզումն արտոնվի։ Սկզբում որոշվել էր դիակիզվածի համար կարգ ընդհանրապես չկատարել, իետո հոգևորականները թաղման և վերջին օժման ծեսն անում էին միայն Եկեղեցում, այսինքն՝ դիակիզումից առաջ։ Բայց 1997թ. մարտի 21-ի Վատիկանը կարգ է կատարում նաև հենց դիակիզարանում։ Հռոմի Կաթոլիկ Եկեղեցին արտոնում է դիակիզել, չպահանջելով այդ քայլին դիմելու համար ոչ մի լուրջ դրդապատճառ։ Բայց, միևնույն ժամանակ, նախընտրությունը տալիս է թաղմանը։ Այսպիսով, Հռոմի Կաթոլիկ Եկեղեցին, գնալով հեռանում է ավանդականությունից։ Հարմարվելով մարդկային օրենքին՝ այն օտարացել է Աստծո օրենքից։ Տիեզերական հայրերից Բարսեղ Մեծի 87-րդ կանոնի համաձայն՝ ավանդությունը Եկեղեցում նույն կանոնի և օրենքի ուժն ունի, քանի որ հաստատված է Եղել մեր սուրբ հայրերի կողմից, ուստի պետք է ավանդվածը սրբությամբ պահենը²⁵։ Տվյալ պարագայում, կաթոլիկներն ընդունում են դիակիզումը, որն ապացուցում է, թե հեռացել են Ճշմարիտ Ճանապարհից։ Հավանաբար այսօրվա <<ազատ մտածելակերպով>> մարդիկ, որոնք նախընտրում են դիակիզումը, որը մեր կարծիքով դժոխքի նախադուռն է, մտածում են, թե կարելի է համաքրիստոնեական սրբի հրահանգներն անտեսել և մեղավոր մարդկանց՝ այս կյանքից հեռանալու և հանդերձալին անցնելու <<հետաքրքիր>> տարբերակ կիրառել։ Այսօր տարբեր քրիստոնեական Եկեղեցիներ, այդ թվում Հռոմի Կաթոլիկ Եկեղեցին, ունեն թե՛ համատիեզերական և թե՛ տեղական Եկեղեցու սրբերի մասունքներ։ Այս մասունքների հիման վրա Հայոց Եկեղեցին կառուցել է իր բազմաթիվ գորավոր տաճարները, որոնց ուժով բազմաթիվ բժշկություններ և հրաշագործություններ են կատարվել։ Այս ամենը միայն հավատացյալ մարդիկ կարող են լրջությամբ հասկանալ,

²⁵ <http://www.holy-trinity.org>

քանզի խոսքն, անշուշտ, միայն կենդանու մարմնի մի պարզ այրման մասին չէ, այլ այն մարմնի, որն ստեղծվել է Աստծո պատկերով ու նմանությամբ: Կաթոլիկներն այսօր Եվրոպայում շատ տարածված այս խոսքն են ասում. <<Մարդն ունի ազատ կամք և ըստ այդ ազատ կամքի՝ կարող է իր մարմնի ճակատագիրը տնօրինել. և անգամ որոշել, թե մահկանացուն կնքելուց հետո թաղվի, թե այրվի>>:²⁶ Մարդակենտրոն այս <<համարձակ>> հայտարարություններն անողներն արտահայտում են ոչ թե Աստծո կամքը, այլ՝ սատանայի, որովհետև միայն չար ուժը մարդուն կարող է դրդել այնպիսի վայրագության, որը դիակիզումն է: Այսօր Եվրոպայում 90 դիակիզարան կան, ուր ամեն օր հարյուրավոր մարդիկ են այրվում՝²⁷ չունենալով որևէ պատճառ դրա համար, եթե անգամ պատճառ ունեն, ապա վստահաբար դրանք միանգամայն ոչ քրիստոնեական են: Ճշմարիտ քրիստոնյան, համաձայն Տիրոջ. <<...հող էիր, և հող կդառնաս>> (Ծննդ. 3:19) խոսքի, պետք է խոնարհություն ցուցաբերի և վստահ լինի Աստծո գորությամբ մեռնելուց հետո իր հարությանը:

ԴԻԱԿԻԶՈՒՄ ԱՅԼ ԿՐՈՆՆԵՐՈՒՄ

Սույն թվականի փետրվարի 27-ին << Ազգային ժողովում ընդունվեց «Հուղարկավորությունների կազմակերպման և գերեզմանատների ու գերեզմանների շահագործման մասին» օրենքը: Օրենք, որն ունի իր դրական և բացասական կողմերը և ներառում է, ինչպես արդեն նշեցինք, հուղարկավորությունների կազմակերպումն ու գերեզմանատների շահագործումը: Այս մասով օրենքը նորություն չէ մեզ համար, սակայն այն ունի շարունակություն. մեր կրոնին, մշակույթին ու բարոյականությանն անհարիր մի երևույթ՝ դիակիզում: Օրենքը նախատեսում է <<-ում հետայսու կազմակերպել դիակիզում: Սա իրավես անհավատության հռչակում է մարմնի հարության հանդեպ: Աշխարհում կան մի շարք կրոններ, որոնք իրենց հավատալիքների շրջանակներում սկզբունքորեն հավատում են դիակիզման՝ որպես ճշմարիտ ծիսական երևույթ՝ մահվանից հետո: Դրանցից են «Արորդիների ուխտ», բուդդիզմ, հինդուիզմ, հարե կրիշնա, լիբերալ հուդաիզմ, մորմոնիզմ և իհարկե կան կրոններ, որոնք միանշանակ մերժում են դիակիզման երևույթը, ինչպիսիք են՝ իսլամ,

²⁶ Cremation and the Catholic church. Washington, DC., Copyright 1997, P. 4

²⁷ <http://www.cremationcathchurch.com>

զրադաշտականություն, պարսիցիզմ, ուղղափառ հուդայականություն և այլն: Քրիստոնեական աշխարհն այս առումով բաժանվում է երկու մասի:

Ուսումնասիրելով դիակիզումն այլ կրոններում՝ դիտարկենք դրանցից մի քանիսը:
«Արորդիների ուխտ»

Մեզանից ոչ հեռու գտնվող այս կրոնը հարցի առնչությամբ գործնականում ներկայացրեց իր տեսակետը՝ այրելով քրմապետ Սլակ Կակոսյանի դիակը և, համաձայն ծիսակարգի՝ մասունքները հանձնելով կրակին, ջրին, հողին, օդին, իսկ հոգին իբրև թե հանձնեցին եթերին՝ արժանացնելով քրմապետին հայ աստվածների օրինությանը: Այս գործընթացը նույն արևորդիները մեկնաբանում են հետևյալ ձղձիմ բացատրությամբ. «Մենք չենք ցանկանում, որ մեր մարմինը դառնա հողի տակ սողացող ձիճուների կեր: Դա մեր իրե-վեհ հոգիների համար ստորացուցիչ է»: Այս մասին հայտարարություն անող, հայոց պատմությանն անհաղորդ ոմն Արմեն Ավետիսյան ներկայացնում է, որ դիակիզումը հայոց մեջ ունի առնվազն 5000 տարվա պատմություն:

Ցանկացած կրոնի հետևորդ (մանավանդ առաջնորդ), եթե ոչ պարտադիր, գոնե պետք է իմանա տվյալ կրոնի ակունքները և ծանոթ լինի ծիսակարգին: Հայ հեթանոսները (մինչ 301թ.) խստիվ կերպով անարգում էին կրակը, առավել ևս՝ դիակիզումը և պատվաբեր համարում թաղումը, ինչի մասին կցանկանայինք հիշեցնել հեթանոս Արմեն Ավետիսյանին: Առանց լուրջ հիմնավորման, թե ինչու մոխիրը պետք է հանձնել բնության չորս տարրերին, ինչն այնքան էլ այդպես չէ, քանի որ կրակին և օդին հանձնելու դեպքում մոխիրը խառնվում է հողին:

Բրահմայականություն

Սկզբնական շրջանում այն ընդունում էր և՛ թաղումը, և՛ դիակիզումը: Սակայն, ըստ Երևույթին, այս երկու արարողություններն անհամատելելի էին, ուստի վեդայական-բրահմայական կրոնը թաղումը համարեց ավելի նախնադարյան և ընդունեց դիակիզումը: Թաղումն այնուամենայնիվ շարունակում էր գոյություն ունենալ, քանի որ կրակն ամբողջությամբ չէր կլանում մարմինը և ոսկորներն ստիպված էին հողին հանձնել: Կրակը բրահմայականների մոտ կոչվում էր Ագնի, այսինքն՝ սրբագործող կրակ և համաձայն բրահմայականների՝ կյանքը շարունակվում էր մոխիրի մեջ, որի համար էլ խնդրում էին Ագնի սրբագործող կրակին չվնասել իրենց հանգույցյալ հարազատներին, իսկ հողին, որի մեջ թաղում էին ոսկորները, չճշել, այլ հարմարավետ ապաստան տալ:

Երբ լուսավոր աշխարհում հայտնվեցին Աստվածները, բացառապես ընդունվեց դիակիզումը, որի միջոցով միայն կարելի էր անցնել Յամա աստծո լուսավոր արքայությունը, որտեղ հանգուցյալին մտահորիզոնի անսահմանափակություն, հզրություն, կարողություն և բարեկեցություն էին սպասվում: Այդ ենթադրյալ աշխարհում կային շատ կովեր, կաթ, կարագ, մեղր և, իհարկե, բոլորի համար կան գեղեցիկ աղջիկներ: Այսինքն՝ շեշտը դրվում է վախճանաբանության վրա. դիակիզումն է միակ ձանապարհը դեպի կարծեցյալ դրախտ:

Հինդուիզմ



Հինդուիզմում ուշագրավ է հետևյալը. միայն վանականները՝ հիջրաները, և մինչև հինգ տարեկան երեխաներն են թաղվում: Թերևս պատճառն այն է, որ վերջիններս անմեղ են համարվում և թաղվելով չեն պղծում հողը. իսկ մի՞թե նրանց հավատացյալ ժողովուրդը թաղվելով է, որ պղծում է հողը:

Բուդդիզմ



Բուդդայականները ևս ընդունում են դիակիզումը՝ վստահ լինելով, որ դրանով արագացնում են ռեինկարնացիան (վերամարմնավորում), այսինքն՝ հոգին ավելի շուտ լքի մարմինը և նորի մեջ մտնի, որը կարող է լինել մարդ, կենդանի և այլն:

Ուղղափառ հուդաիզմի

Ուղղափառ հուդաիզմի Հալախա օրենքն արգելում է դիակիզումն այն պարզ պատճառով, որ դիակիզված հանգուցյալի հոգին չի կարող գտնել իր վերջնական հանգիստը: Կազմակերպությունները համարում են դիակիզմի անհամար առաջարկ: Դիակիզմը կազմակերպությունների համար անհամար առաջարկ է արգելում գանկացած միջամտություն այդ պրոցեսին. մարդու մարմինը պետք է վերադարձվի հողին այնպես, ինչպիսին որ է: Հրեական օրենքն արգելում է դիակիզում նաև այն դեպքում, երբ հանգուցյալի հարազատները գտնվում են արտերկրություն և գերեզմանը խնամող չի լինի, անգամ հանգուցյալի ցանկությունը հաշվի չի առնվում:

Դիակիզված մասունքները չի կարելի թաղել հրեական գերեզմանոցում, Կադիշ կարդալ և ամենակարևորը՝ Հրեաստան ներմուծել»:

Զրադաշտականություն

Զրադաշտականներն ընդունում էին դիակիզումը, սակայն հետագայում փոխեցին իրենց դիրքորոշումը կրակի նկատմամբ, որն անվանվում էր Աթար՝ սուրբ կրակ: Սուրբ էին համարվում բնության մնացած երեք տարերը ևս: Այդ պատճառով էլ ոչ թաղում էին, ոչ այրում և ոչ էլ թողնում փոխելու, որպեսզի օդը չպղծվի, այլ կառուցում էին սյուների վրա կանգնեցված հերմետիկ աշտարակներ, այստեղ բերված դիակները բաժին էին դառնում գիշատիչ թռչուններին, որից հետո ոսկորները նետում էին աշտարակի մեջ, որն էլ, ի զարմանս մեզ, որոշակի ժամանակ հետո քանդում և խառնում էին հողին. նույնքան անհեթեթ տարբերակ, որքան նրանց կիրառած դիակիզումը:

Իսլամ

Իսլամն ու դիակիզումը անհամատեղելի հասկացություններ են: Եթե այն տեղի է ունեցել, ապա մեղքը կատարողների վրա է ընկնում, իսկ իսլամադավանի հոգու համար ոչինչ չի կարող փոխվել. միևնույն է՝ անկախ դրանից պատասխան է տալու «Մեծ դատաստանի» առաջ: Եթե իսլամադավանը չի թաղվում Շարիաթին համապատասխան, ապա տվյալ շրջանի իսլամի հետևորդները նույնպես մեղքի մեջ են ընկնում: «Էշâհնôءà» թերթում Անաս-Խազի մզկիթի իմամը հայտարարել է, որ դիակիզումն իսլամում մեծ մեղք է, մեղքն ակամա իր վրա է վերցնում նա, ով կատարում է այդ կարգը: Ըստ իմամի՝ սխալ հուղարկավորությամբ մահացածի հոգուն չի կարելի վնասել, այն արդեն «Բարձր դատարանում» է: Իսկ Թաթարստանի նուֆթի առաջին տեղակալ Վալիապուլա Յակուպովը հայտնել է. «Մահացածի մարմինը չի թույլատրվում անգամ լվանալ շատ սառը կամ տաք ջրով, ուր մնաց՝ վառել: Մուհամեդ մարգարեն ասում է, որ աստված է կրակի տերը, իսկ մարդկանց իրավունք չի տվել վառել ուրիշներին»: Ըստ Յակուպովի՝ շատ ավելի իրատապ խնդիրներ կան, ուա Եվրոպայում է, որ կենսական հարցերը լուծված են և կարող են դիակիզարաններ կառուցել, պաշտպանել հոմոսեքսուալիստների իրավունքները...: Իսկ այն հայտարարությունները, թե գերեզմանները էկուոգիական վնասներ են հասցնում, անհեթեթություններ են: Հազարավոր տարիներ մարդիկ, անասուններ, թռչուններ մահացել են և հողի դարձել,

որից բնության հավասարակշռությունը չի խախտվել, ուր մնաց էկոլոգիական ինչ-ինչ վնասներ:

Ոուս Ուղղափառ Եկեղեցի

Ոուս Ուղղափառ Եկեղեցին հստակ պատասխան չի տալիս դիակիզման վերաբերյալ. որոշ հոգևորականներ կտրականապես մերժում են և ոմանք շատ մակերեսորեն նայում այս հարցին: Դիակիզումը չի դիտվում որպես վանդալիզմ և չի հակասում ուղղափառ կանոններին, որովհետև «Վերջին դատաստանին» մարդկանց մարմինները վերականգնվելու են: Սակայն դիակիզումը խախտում է ուղղափառ հուղարկավորության ավանդույթը, որի հիմքում ընկած է հարգանքը մահացածի նկատմամբ, ինչպես օրինակ՝ դեմքով դեպի արևելք թաղելը, իսկ ինչպե՞ս վարվել դիակիզման պարագայում: Հողում թաղելու ավանդությունն էլ դեռևս շատ արմատացած է ժողովրդի մեջ, ուստի, ուղղակի պետք է ճիշտ ընտրել գերեզմանների տեղը և բնապահպանության հետ ոչ մի խնդիր չունենալ:

Արևելյան ոչ քրիստոնյա ժողովուրդներ

Դիակիզումը տարածված է ոչ քրիստոնյա արևելյան ժողովուրդների մեջ, այն տվյալ ժողովրդի կրոնական համոզումների դրսենորումն է, սերտորեն կապված ազգային ավանդության հետ, և ունի ոչ պակաս մշակութային արժեք:

ԹԱՂՈՒՄԸ ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆՈՒՄ

Քրիստոնիայի համար որևէ իրողություն, որ առնչվում է իր կյանքին և կենցաղավարությանը, պետք է հիմնավորվի քրիստոնական ձշմարիտ սկզբունքներով: Յուրաքանչյուր քայլ պետք է կշռադատվի քրիստոնեության կատարյալ և ձշմարիտ նժարներով: Անհիմն պատճառներից ելնելով չենք կարող ոտնահարել մեր դարավոր հավատը, Եկեղեցու սրբազն ավանդությունն ու ծեսը: Մեր Եկեղեցու Սբ. հայերը դարեր շարունակ մշակել, հղել և կերտել են մեր դավանանքը, որն անաղարտ կերպով փոխանցել են մեզ՝ պահելու և պահպանելու, այլ ոչ թե ըստ քմահաճության: Դարերի ընթացքում ոչ միայն զարգացավ և ձևավորվեց քրիստոնական Եկեղեցու դավանանքը, այլև ծիսաբարողակարգը, որի մեջ մտնում էր աստվածաշտությունը և մարդու կյանքի հանգրվանային և կարևոր դեպքերին վերաբերող ծիսական կողմը: Ծեսը բխում

է մեր հավատից և դավանական սկզբունքներից, որոնք ձևավորվել են ըստ Սբ. Գրքի և Սրբազն ավանդության: Այսինքն՝ Եկեղեցում ամեն բան միահյուսված է, չկա ոչ մի ավելորդություն կամ աններդաշնակ հակասություն: Եկեղեցու ծեսը նրբորեն մշակված արարողությունների և գործողությունների մի համակարգ է, որի մեջ մտնում են աստվածաշտության կարգը և Սբ. Խորիուրդները: Այդ շարքի մեջ է նաև թաղման կարգը: Փաստորեն, Եկեղեցին մարդկու կյանքում ներկա է մշտապես. ծնված օրվանից մինչև մահ, այսինք Եկեղեցին հոգատար մոր նման մարդ արարածին առաջնորդում է ողջ կյանքի ընթացքում և վերջում իր ձեռքով հանձնում Աստծուն: Եթե մեզ քրիստոնյա ենք համարում և Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու զավակ ենք, ապա մեր կյանքի հանգրվանները պիտի անցնենք այնպես, ինչպես Եկեղեցին է սահմանում: Մեզ հնուց ի վեր հայտնի է թաղման կարգը. այլ ձև և տարբերակ չի ընդունվում Եկեղեցու կողմից, քանզի Սուրբ Գիրքը, Սրբազն ավանդությունը, և Եկեղեցու Սուրբ հայրերը մեզ ավանդել են թաղման տարբերակը, որն ըստ Աստծո խոսքի՝ «Հող էիր, և հող կղառնաս»-ն է (Ծննդ 3:19): Հող է ասում, այլ ոչ թե՝ մոխիր:

Նոր Կտակարանում, Մատթեոսի ավետարանում կարդում ենք. «Եվ Նրա աշակերտներից մեկն ասաց. Տեր թույլ տուր, որ զնամ նախ իմ հորը թաղեմ» (Մատթեոս 8:21): Այս պարագային այդքան էլ կարևոր չէ Հիսուս ինձ պատասխանեց, այլ կարևոր է այն, որ աշակերտի խոսքից պարզ ու հասկանալի է դառնում, որ մահացածին թաղելու էին, այսինքն՝ ոչ թե պիտի կիզեխն, այլ հանձնեխն հողին: Նոյնն է սկզբունքը նաև մեկ այլ ավետարանական հատվածի. «Իսկ Հովհաննեսի աշակերտները եկան վերցրին նրա մարմինը և թաղեցին» (Մատթեոս 14:12): Պարզ է, որ իրեաների մոտ ընդունված էր թաղման տարբերակը: Ավետարանն էլ այն մատուցում է մեզ իբրև ընդունված և ճիշտ ձև: Նոր Կտակարանում կամ նաև թաղման այլ դրվագներ Գործք Առաքելոցում կարդում ենք «Եվ երիտասարդները ոտքի ելան, պատանքեցին նրան ու տարան թաղեցին» (Գործք. 5:6):

Մարդու թաղելը շատ հաճախ համեմատվում է մկրտության Սուրբ Խորիրդի այն հատվածի հետ, երբ մկրտվողը երեք անգամ ընկղմվում է օրինված ջրի մեջ, դրանով խորիրդավորապես թաղվում Քրիստոսի հետ և նորից հարություն առնում. «Թաղվելով Նրա հետ մկրտության մեջ դրանով իսկ Նրա հետ հարություն առանք՝ Աստծո գորությանը հավատալով» (Կող. 2:22): Թաղման առավել մանրամասն նկարագրություն

կա Ղազարոսի պատմության մեջ: Ղազարոսը Հիսուսի սիրելի բարեկամներից էր և հիվանդ էր: Հիսուս լսելով Ղազարոսի մահվան բողը, հայտնում է իր աշակերտներին, այնուհետ Հիսուս գալիս է և նրան գտնում է չորս օրից ի վեր թաղված և գերեզմանի մեջ (Հովի 11:14;17): Ուշադրություն դարձնենք վերջին հատվածին՝ գերեզմանի մեջ էր, այսինքն Ղազարոսը թաղված էր: Երբ Հիսուս հրամայում է գերեզմանի քարը մի կողմ տանել, Ղազարոսի քոյրերը ընդդիմանում են, քանզի չորս օր էր անցել և նրա մարմինը նեղել էր արդեն (Հովի. 11:38-39): Շարունակության մեջ տեսնում ենք, թե ինչպես է Հիսուս հարություն տալիս Ղազարոսին. «Բարձր ձայնով աղաղակեց և ասաց՝ Ղազարոս վեր կաց դուրս արի՛, և մեռելը ելավ, ոտքերը կապված, ձեռքերը երիզով ամրացված և երեսը վարշամակով պատած» (Հովի. 11:43-44): Այստեղից հետևում է, որ Ղազարոսն ուղղակի պատանքով էր պատված, նրա հարությունը նախօրինակն էր մեր Տիրոց թաղման և հարության: Չորս ավետարաններն էլ խոսում են այս մասին: Մատթեոսի ավետարանում կարդում ենք. «Եվ Հովսեփի մարմինը առնելով՝ այն պատեց մաքուր կտավով և դրեց նոր գերեզմանի մեջ» (Մատթ. 27:59): Հասկանալի է, որ Տիրոց մարմինն առանց այլայլման և փոփոխման, ըստ սովորության՝ պատվեց կտավով և դրվեց գերեզմանի մեջ: Բնականաբար, սա կատարյալ օրինակ է, որին պետք է հետևենք Տիրոց կողմից ավանդված և հաստատված օրինակներին: Հովհաննես ավետարանիչն ավելի մանրամասն նկարագրելով գրում է. «Նիկոդեմոսը, որ առաջին անգամ գիշերով Հիսուսի մոտ էր եկել, բերեց մոտ 100 լիտր զմուռս՝ հալվեի հետ խառնված: Վերցրին Հիսուսի մարմինը և պատեցին կտավներով՝ խնկերով հանդերձ, ինչպես հրեաների սովորությունն էր՝ պատել: Եվ այն տեղում, ուր Նա խաչվեց, պարտեզ կար և այդ պարտեզում՝ մի նոր գերեզման, որի մեջ երբեք որևէ մեկը չէր դրված: Եվ քանի որ գերեզմանը մոտ էր, հրեաների ուղբաթի պատճառով, այնտեղ դրեցին Հիսուսի մարմինը » (Հովի. 19:39-42): Փաստորեն, ոչ միայն կարևոր է այն հանագամանքը, որ Տիրոց մարմինը դրվեց գերեզմանի մեջ առանց որևէ աայլակերպության, այլ ավելին՝ Նրա մարմնի նկատմամբ մանրամասն խնամք և հոգածություն ցուցաբերեցին. մաքրեցին Տիրոց մարմինը հնարավորինս ծածկեցին մարմնի վերքերը ու անուշությամբ պատելով՝ դրեցին գերեզմանում: Երեք օր հետո մեր Տերը այդ նույն մարմնով հրաշափառ հարություն առավ և փրկություն պարզեց ամենքիս: Այս նույն հավատով էլ պիտի

հարություն առնենք մեր մարմնով: Նոր Կտակարանի օրինակներն աստվածահաճո են, ուստի, լինելով Աստծո զավակներ պետք է կատարենք մեր երկնավոր Հոր կամքը:

ԹԱՂՈՒՄԸ ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆՈՒՄ

(Կրակը՝ որպես պատժիչ միջոց)

Աստվածաշնչում կրակի կամ մարդկային մարմնի այրման մասին նկարագրությունները հիմնականում կապվում են պատժի հետ: Այն Աստծո և մարդու հարաբերության մեջ է, այսինքն՝ Աստված որոշ դեպքերում մարդուն կամ մարդկությանը պատժում է կրակի միջոցով: Եզեկիելի մարգարեության մեջ նշված է. «Քեզ ծառայեցնելու եմ քո թշնամիներին մի երկրում, որ դու չգիտես, քանզի իմ բարկությունից կրակ է վառվում, որ բորբոքվելու է ձեզ վրա»:²⁸ Վառ օրինակ է Ծննդոց գրքում պատմվող Սոդոմի և Գոմորի պատմությունը. «Տերը երկնքից ծծումբ ու կրակ թափեց Սոդոմի ու Գոմորի վրա»²⁹: Իսկ քահանաներին պատգամներ տալիս Աստված Մովսեսին պատվիրում է հետևյալը. «Եթե քահանայի դուստրը պոռնկությամբ պղծվի, նա արատավորած կլինի իր հոր անունը. նա պետք է հրով այրվի»³⁰: Պատժի մի դրսնորում, որը վերաբերում է քահանաներին և նրանց ընտանիքի անդամներին: Սա դրսնորվում է նաև իսրայելացիների ընտանիքներում. օրինակ. «Երեք ամիս հետո Հուդային հայտնեցին, թե՝ «Պոռնակացել է քո հարս Թամարը և ահա պոռնկանալու պատճառով հղիացել»: Հուդան ասաց. «Դուրս հանեցեք նրան, թող ողջ-ողջ այրվի»»³¹: Հրով այրվելու պատիժը դրսնորվում է ոչ միայն պոռնկության, նաև՝ գողության ժամանակ: Նավեհի որդի Հեսուի գրքում նշվում է. «Եվ ով որ մեղադրվի նզովվածը գողանալու մեջ, թող հրով այրվի ինքը, իր ամբողջ տունը և այն ամենը, ինչ որ նա ունի, որովհետև նա դրժել է Տիրոջ ուխտը և անիրավություն է արել իսրայելի մեջ»³²:

Ամոսի մարգարեության մեջ ուսկորներն այրելու վերաբերյալ Աստված ասում է. «Մովարի երեք ամբարիշտներին և մանավանդ չորրորդի համար ես պիտի պատժեմ նրանց, քանի որ նրանք այրեցին եղոմացիների թագավորների ուսկորները, մինչև որ

²⁸ Երեմիա ԺԵ 14

²⁹ Ծննդոց ԺԹ 24

³⁰ Ղևոնական ԻԱ 9

³¹ Ծննդոց ԼՇ 24

³² Հետու Է 15

դրանք մոխիր դարձան»³³: Որպես հավաստիացում վերը նշված հատվածների՝ Ամոսի մարգարեռության մեջ ընդգծվում է. «Այսպես մի տեսիլք ցույց տվեց ինձ Տեր Աստվածը, ահա կրակով դատաստան արեց Տեր Աստվածը, կրակը լափեց շատ խորություններ և կերավ երկրի մի մասը»³⁴: Արդեն հստակ երևում է, որ Հին Կտակարանում կրակը դատաստանի և պատժի համար էին կիրառում՝ ըստ Աստծո պատգամների:

Մահվան և թաղման մասին Հին Կտակարանում կան հետևյալ դրվագները: Երբ մահանում է Աքրահամի կինը՝ Սառան, Աքրահամը գտնվում էր Բաբելոնում, և նա գերեզմանի համար հող է խնդրում: Տեղի բնակչները Աքրահամին պատասխանում են. «Լսիր մեզ, տեր: Դու մեր մեջ Աստծու նշանակված թագավորն ես: Քո հանգուցյալին թաղիր մեր լավագույն գերեզմաններից մեկում, որովհետև մեզնից ոչ մեկը չի հրաժարվի քեզ շիրիմի համար տեղ տրամադրելուց»³⁵:

Հակոբի կին Ռաքելը երբ մահանում է, Ծննդոց գրքում նկարագրվում է. «Մեռավ Ռաքելն ու թաղվեց Եփրաթայի՝ նույն ինքը Բեթղեհեմի ճանապարհի վրա: Հակոբը նրա շիրիմի վրա կոթող կանգնեցրեց: Դա մինչև այսօր էլ հայտնի է իբրև Ռաքելի շիրիմի կոթող»³⁶: Այստեղ երևում է, որ Հին Ռւկստի ժամանակաշրջանում ոչ միայն թաղում էին, այլև մեր օրերում քաջ հայտնի շիրմաքարեր էին կանգնեցնում՝ որպես հիշատակ իրենց ննջեցյալների: Թաղման և նախնիների հիշատակի պահպանման մասին Բ Թագավորաց գրքում Դավիթ արքան ցանկանում է հատուցել իր ծառա Բերզելիին: Դավիթը նրան հրավիրում է Երուսաղեմ, բայց ծառան նրան պատասխանում է. «Քո ծառան թող ապրի ու մեռնի իր քաղաքում, իր հոր ու մոր գերեզմանի մոտ»³⁷: Երրորդ Թագավորաց գրքում գերեզմանի և մարդու ոսկորների մասին գրված է. «Երբ մեռնեմ, ինձ կթաղեք այն գերեզմանում, ուր թաղվեց Աստծո մարդը. Նրա ոսկորների կողքին դրեք ինձ, որպեսզի իմ ոսկորները պահպանվեն Նրա ոսկորների հետ, որովհետև անպայման կկատարվի Տիրոջ այն խոսքը, որ ասվեց Բեթելում գտնվող զոհասեղանի ու Սամարիայի բարձրադիր կռատների ռեմ»³⁸: Եզեկիելի մարգարեռության մեջ Աստված է խոսում թաղման և գերեզմանի մասին. «Այն օրը Գոգին ես Խսրայելում տալու եմ գերեզմանի

³³ Ամս Բ 1

³⁴ Ամս Է 4

³⁵ Ծննդոց ԻԳ 6

³⁶ Ծննդոց ԼԵ 19 – 20

³⁷ Բ Թագավորաց ԺԹ 37

³⁸ Գ Թագավորաց ԺԳ 31

հայտնի տեղը, ծովի կողմերից եկածների շիրիմը. ձորագետի շուրջ գերեզման են շինելու ու այնտեղ թաղելու են Գոգին ու նրա բոլոր բազմություններին: Եվ շիրիմը կոչվելու է «Գոգի հոտի գերեզման»³⁹:

Այս հատվածներից հստակ երևում է, որ Աստված պատվիրում է թաղել, ոչ թե այրել: Թաղել այնպես, որ մահացածներին հիշեն, հատուկ գերեզմաների տեղեր է հատկացնում, որոնք ունեն անվանումներ. «Ռաքելի շիրիմի կոթող», «Գոգի հոտի գերեզման» և այլն:

ԹԱՂՈՒՄԸ ՀԱՅ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵԶ

Հայաստանում քրիստոնեական թաղման ծեսի սկզբնաղբյուները մեզ չեն հասել: Աղքատիկ տեղեկություններ են պահպանվել հայ մատենագրության մեջ այնպիսի երևելի անհատականությունների թաղման մասին, ինչպիսիք են Սուրբ Սահակ Պարթևը, Սուրբ Մեսրոպ Մաշտոցը, Սուրբ Վրթանես Հայրապետը և այլն: Միևնույն ժամանակ լռության են մատնված հասարակ քրիստոնյաների թաղման ծեսը:⁴⁰ Թաղման կարգը զարգացավ և շնորհիվ Մաշտոց Եղիվարդեցի Հայրապետի (ժ դար): Սակայն մինչ այդ թաղման ժամանակ նկատելի էին այնպիսի տարրեր, որոնք մուծվել էին քրիստոնեության մեջ հեթանոսական ծեսից՝ թաղման ընթացքում վայրաբարո աղաղակները, երեսները ձանկութելը, մազերը գլխից պոկելը, դիվական պարերը և այլն: Այդ սովորույթները վերացնելու համար հայոց եկեղեցին ժողովական որոշումներով, կաթողիկոսական առանձին թղթերով փորձել է խրատել ժողովրդին՝ հեռու մնալ օտար և քրիստոնեական հավատին անհարիր բարքերից: Օրինակ՝ Շահապիվանի ժողովի կանոնախմբում կարդում ենք. «Որք կօծ դնեն եւ կամ զՃակատն հարկանեն եւ կամ զհերս խզեն՝ նզովեալ լիցին ի կեանս եւ ի մահ»:⁴¹ Հովհանն Մանդակունին անդրադառնալով թաղման ընթացքում լաց ու կոծին՝ խրատում է քահանաներին և ասում. «Արդարն՝ ասա ինձ ո՞վ քահանա, Աստծու ծառայողների խումբը և սաղմոսներն ինչո՞ւ ես մտցնում մերկանդամ մարդկանց խմբի մեջ: Ընդհանուր ի՞նչ կա Աստծու սուրբ պաշտոնյայի և մերկանդամ ու

³⁹ Եգեկիել Լթ 11

⁴⁰ Անդեա Բարբարա Շմիդտ, Հայոց թաղման ծեսը, Գանձասար աստվածաբանական հանդես, հատոր 6, էջ 85

⁴¹ Կանոնագիրք հայոց, հատոր Ա, էջ 247

սատանայավայել ողբացողների միջև»⁴²: Փորձելով վերացնել մահացածների վրա կատարվող վայրաբարո լաց ու կոծք՝ մեր Եկեղեցու հայրապետներն ամեն բան արեցին, որպեսզի թաղման ծեսին հաղորդեն գոհաբանական, հանդիսավոր ձև, որը համեմատական ոչ մի եզր չուներ ինքնամոռացության հասնող ողբի, ինքնախեղման և հաճախ էլ ինքնասպանության տեսարանների հետ:⁴³ Վաղ քրիստոնեական շրջանում թաղման կազմակերպման գործը մահացածի հարազատների հոգսը լինելուց հետզինետե դադարում է և դաշնում ողջ քրիստոնյա համայնքի հոգսը:⁴⁴

Չորրորդ դարում թաղման ծեսի հիմնական բաղադրամասերն էին՝ սաղմոսերգությունը, հիմներգությունը, ննջեցյալի համար բարեխոսական աղոթքը և գերեզմանի օրինության կարգը.⁴⁵ Այդ մասին Կորյունի «Վարք Մաշտոցի» աշխատության մեջ, նկարագրվում է Սբ. Սահակ Հայապետի մահը և թաղումը. «... մեծաթիվ մարդկանց, եպիսկոպոսների ու քահանաների, սարկավագների ու դպիրների հետ, սաղմոսներ, օրինություններ ու հոգևոր երգեր երգելով՝ բերեցին Տարոն գավառի Հաշտիշատ գյուղը և ամեն պատիվ տալով՝ Աստծո սուրբ մարդու մարմինը մարտիրոսական մատուռում տեղավորեցին և քրիստոսաշեն կնիքով կնքեցին»:⁴⁶ Իսկ Սբ. Մեսրոպ Մաշտոցի թաղման պատմության մեջ Կորյուն վարդապետը սաղմոսների, երգերի և օրիներգերի կողքին հիշատակում է նաև վառվող մոմեր, բորբոքված ջահեր, անուշահոտ խնկեր և առջևից գնացող լուսավոր խաչվածներ:⁴⁷ Բացի այդ, վկայություն կա, որ հանգուցյալին մերկացնում էին իր աշխարհիկ զգեստներից և մարմինը ջրով լվանալուց հետո պատում սպիտակ կտորով, որը ծիսական լեզվով կոչվում է պատանք:⁴⁸ Վաղ քրիստոնեական շրջանում հայկական թաղման ծեսից բացակայում էր հանգուցյալի դագաղի Եկեղեցու բակում (իսկ եթե հոգևորական է ներսում) կարձատև դադարը: Այն ավելացել է ժ դարում:⁴⁹ Աշխարհականի և հոգևորականի թաղման ծեսերը որոշակի տարբերություններ ունեն.

⁴² Հ. Մանդակումի, Ճառք, 2001 թ. էջ 359

⁴³ Գանձասար, հատոր 6, նշվ. աշխ., էջ 88

⁴⁴ Նույն տեղում, էջ 85

⁴⁵ Նույն տեղում, էջ 86

⁴⁶ Կորյուն «Վարք մաշտոցի», Երևան 1994թ էջ 78

⁴⁷ Նույն տեղում, էջ 80

⁴⁸ Տե՛ս Գիրք Հարցմանց, էջ 671

⁴⁹ Գանձասար, հատոր 6, նշվ. աշխ., էջ 94

- . Եկեղեցու կարգի ժամանակ վանականի դին դրվում է Եկեղեցում, իսկ աշխարհականինը՝ Եկեղեցու ճակատամուտքի առջև՝⁵⁰,
 - . Իանգուցյալ հոգևորականի դին օծվում է Սբ. Մյութոնով (Ճակատը և ձեռքերը),
 - . քահանայաթաղի ժամանակ կարդացվող սուրբգորային հատվածներն ավելի երկար ու ճոխ են,
 - . ի տարբերություն աշխարհականի, որի դին պատվում էր պատանքով, ննջեցյալ հոգևորականին հազցնում էին իր զգեստները:⁵¹ Այս մասին վկայում է նաև Կորյուն վարդապետն ասելով, որ Սբ. Սահակ Հայրապետին քահանայական զգեստներ հազցրեցին:⁵²
 - . հոգևոր դասը կամ սրբերը թաղվում էին մատուռներում և Եկեղեցիներում կամ էլ նրանց գերեզմանների վրա հետագայում կառուցվում էին մատուռներ ու Եկեղեցիներ:⁵³ Այս իրողությունը բացատրվում է «Ազաթանգեղայ պատմութեան» մեջ, որտեղ Սբ. Գրիգորը հորդորում է թագավորին ու ժողովրդին Հռիփսիմյանց նահատակների գերեզմանների վրա կառուցել աղոթքի Սուրբ տաճարներ, որպեսզի այդ Սրբերի բարեխոսությամբ իրենք էլ հանգստանան չարի պատուհասներից ու տանջանքներից:⁵⁴ Իսկ ինչո՞ւ են մահացած մարդուն թաղում հողի մեջ, խունկ ծխում նրա վրա, մարմինը պատում պատանքով, քանի որ.
 - . այն Աստծու պատկերն է, և իբրև պատվական գանձ այն պահում են հողի տակ,
 - . որպեսզի այն հարազատների կողմից պաշտամունքի առարկա չդառնա,
 - . որ կենդանի եղողները դադարեն սգալ,
 - . որպեսզի մարդ վճարի իր պարտքը՝ հող էիր, հող կդառնա:
- Մարդու մարմինը հողի մեջ դնելուց առաջ օրինում են գերեզմանը, քանի որ Աստվածորդին գերեզմանի մեջ դրվելով օրինեց այն: Թաղումից հետո գերեզմանը կնքվում է երեք անգամ, որն ունի Սուրբ Երրորդության խորհուրդ, այն պահպանում է մարդու հոգին, մարմինը և շունչը, ինչպես նաև տալիս խոսքով և գործով կատարված մեղքերի թողություն:⁵⁵ Մարդու մարմինը պատում են պատանքով, քանի որ

⁵⁰ Հարցմանց, էջ 672

⁵¹ Գանձասար, հատոր 6, նշվ. աշխ., էջ 96

⁵² Կորյուն, էջ 78

⁵³ Տես Ազաթանգեղոս, էջ 431-433, Կորյուն, էջ 78-80

⁵⁴ Ազաթանգեղոս, էջ 407

⁵⁵ Գիրք Հարացմանց, էջ 672

աշխարհական զգեստներ հանելը նշանակում է իրաժարվել աշխարհի մեղքերից, իսկ պատաճքը խորհրդանշում է լուսեղեն զգեստները, որոնք մարդու հագնում է դրախտում: Պատաճք է կոչվում, որովհետև ամուր պատում է մարդու բոլոր զգայարանները, և թույլ չի տալիս նրան գործել թե՛ բարի և թե՛ չար գործեր:⁵⁶ Թաղման թափորը ննջեցյալի հետևից ընթացող մարդիկ են՝ վերջինիս եղբայրներն են, որոնք հոգեոր պատերազմի ժամանակ աղոթքներով օգնելու են նրա հոգուն: Մահացածի դեմքն ուղղում են արևելք, որովհետև այնտեղ է գտնվում դրախտը, որտեղից արտաքսվեց նա, ինչպես նաև արևելքից է լինելու Տիրոջ գալուստը:

Այսպիսով, Հայ Եկեղեցու և հայ քրիստոնյայի համար միակ և անփոխարինելի տարբերակը թաղման ժեսն է, որը ձևավորվել և դարերի ընթացքում սրբագործվել մեր լուսահոգի հայրապետների և վարդապետների կողմից և որն իր արտահայտությունն է գտել հայ մատենագրության մեջ:

ՍԿՂԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐ

1. Մովսես Խորենացի «Հայոց պատմություն»
2. Մաշտոց, Ս. Էջմիածին, 2001 թ.
3. ՀՍՀ հանրագիտարան, հ. 3 և 4, Երևան 1978 թ.
4. Եղնիկ Կողբացի, Եղծ Աղանդոց, Երևան, 1994 Աստուածաշունչ Մատեան, 4. Ս. Էջմիածին 2004 թ.
5. S.Քարգեն Ա.Քհն. Մազսուտեան, Ճանապարհ առ Քրիստոս, Նյու-Յորք, 1995 թ.
6. Էջմիածնի պատմությունը և պատմությունը մատուցությունը, ծ. 2, Լինքոլն 1992
7. <http://www.Panorama.am>

⁵⁶ Նոյն տեղում, էջ 671

